

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ

«Մանկանացու ծնեալ՝ անման գիւրն յիշատակ եթող»:

ԽՈՐԵՆԱՑԻ

1953 թվականի մարտի 5-ին, երեկոյան ժամը 9-ից 50 րոպե անց, Մոսկվայում, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց Սովետական Միության ժողովուրդների իմաստուն առաջնորդ, աշխարհի առաջավոր մարդկության սիրելի ուսուցիչ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը:

Դադարեց բաբախելուց սիրտը մի մարդու, որն իր ո՛ղջ կյանքը, բոլո՛ր ուժերը, բոլո՛ր ընդունակությունները, իր ամբո՛ղջ արյունը կաթիլ առ կաթիլ նվիրաբերել է մարդկային հասարակությանը դեպի երջանկություն և բարություն առաջնորդելու վեհ գործին:

Ի. Վ. Ստալինը իր վաղ պատանեկան հասակից, նպատակ է դնում իր առջև՝ պայքարել աշխարհի անարդարությունների դեմ, սրբել հարստահարվող մարդկության աչքի արցունքները և ստեղծել այնպիսի մի հասարակություն, ուր մարդը չշահագործի մարդուն և ուր մարդիկ ապրեն երջանիկ և բարօր կյանքով: հաղթահարելով ցարական դաժան պայմաններում ստեղծված բոլոր տեսակի դժվարությունները՝ հետապնդում, բանտ, աքսոր, պողպատյա կամք ունեցող մարդը, անվարան, աշխատավորներին առաջնորդում է դեպի ազատություն:

Ի. Վ. Ստալինը, անման Վ. Ի. Լենինի հետ, գլխավորում է աշխատավորության գրոհը ցարական կառավարության դեմ, տապալում այն՝ իրագործելով միլիոնավոր հարստահարվողների երազանքը՝ ստեղծելու աշխատավորության առաջին պետությունը՝ Սովետական իշխանությունը:

Լենինի մահից հետո Ի. Վ. Ստալինը գլխավորեց Սովետական Միությունը՝ սովետական ժողովուրդներին առաջնորդելով անհնարին հաջողություններին: Նրա անմիջական ղեկավարությամբ վերականգնվեց առաջին աշխարհավեր համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կռիվների ընթացքում քարուքանդ եղած երկիրը: Նրա ղեկավարությամբ ստեղծվեց ժամանակակից բարձր ինդուստրիայով և առաջավոր տեխնիկայով հագեցված գյու-

ղատնեսություն: Նրա ղեկավարությամբ միլիոնավոր աշխատավորներ և նրանց զավակները կրթվեցին և կրթվում են մեր դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Եվ, վերջապես, նրա ղեկավարությամբ Սովետական Միությունը դարձավ աշխարհի ամենահզոր և ամենառաջադեմ երկրներից մեկը:

Մեծ է Ի. Վ. Ստալինի դերը նաև ազգային հարցում՝ թե՛ որպես տեսաբան և թե՛ որպես ժողովուրդների եղբայրությունը գործնականում կերտող: Ցարական Ռուսաստանում ճնշվող փոքր ազգությունները ո՛չ միայն ձեռք բերեցին իրենց կատարյալ ազատությունը նախկին «ժողովուրդների բանտ»ից, այլև եղբայրական ռուս ժողովրդի գործուն օգնությամբ վերացրին իրենց տընտեսական և կուլտուրական հետամնացությունը: Ստալինի անունը բոլոր ճնշված ժողովուրդների ազգային ազատագրության, անկախության պայքարի մեծ դրոշակակրի պայծառ անունն է՝ իբրև մարդկային ամենանվիրական ձգտումների արտահայտիչն ու մարմնացումը: Ոչ միայն սովետական ժողովուրդը, այլև ամբողջ պրոգրեսիվ մարդկությունը, խորը և ամենավսեմ զգացմունքներով են կապվել Ի. Վ. Ստալինի հետ:

Հանդիսանալով խոշոր տեսաբան՝ պատմության զարգացման օրինաչափությունների իմացության գործում և միաժամանակ հանճարեղ կազմակերպիչ, Ի. Վ. Ստալինը կարողացավ տասնյակ տարիներ Սովետական Միության կառավարության ղեկը իմաստությամբ վարել՝ անվտանգ նրան առաջնորդելով բազմաթիվ և բազմապիսի դժվարությունների միջից: Հիշենք թեկուզ ֆաշիզմի ճենգագործ հարձակումը Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների և Սովետական Միության վրա: Սովետական ռազմական ուժերը, Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ, ո՛չ միայն կազմակերպեցին պատշաճ հակահարվածը ագրեսորի դեմ, այլև աջակցեցին բռնափելու ֆաշիզմի լուծը Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների վրայից:

Հետպատերազմյան տարիներին, ինչպես և դրանից առաջ, Ի. Վ. Ստալինը հանդիսացել է խաղաղության դրոշակակիրը: Նա իր սքանչելի կյանքը նվիրել էր մարդկությանը բնաջնջող պատերազմից փրկելու վսեմ գործին. «Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»: Այսօր աշխարհում խաղաղության պահպանման գործը ո՛չ միայն սովետական ժողովրդի նվիրական ձգտումն է, այլ ողջ առաջադեմ մարդկության, որը վճռականորեն պայքարում է պատերազմի հրձիգների դեմ: Խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու Ստալինյան կամքը այսօր, վշտի այս օրերին, ավանդ է մնում խաղաղասեր ժողովուրդներին, որոնք անշեղորեն կգնան դեպի խաղաղության վերջնական նվաճումը. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՊԱՀՊԱՆՎԻ ԵՎ ԿԱՄՐԱՊՆԴՎԻ, ԵԹԵ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ ՎԵՐՑՆԵՆ ԻՐԵՆՑ ՁԵՌՔԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆԵՆ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ»: Հարգելով մեծ Ստալինի պայծառ հիշատակը, աշխարհի խաղաղասեր ժողովուրդները, սովետական ժողովրդի հետ միասին կկատարեն նրա այս մեծ պատգամը, կպաշտպանեն խաղաղությունը ողջ աշխարհում:

Մեծ է եղել Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի երախտիքը նաև հայ ժողովրդի նկատմամբ: Նա հանդիսացել է հայ ժողովրդի փրկիչը և հովանավորողը: Մեր երախտագետ ժողովուրդը երբե՛ք չի մոռանա, որ իր պատմության ամենածանր ու ողբերգական շրջանում, սրանից մոտ 30 տարի առաջ, երբ օրակարգում դրվել էր մեր թշնամիների կողմից հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման արյունոտ ծրագիրը, երբ հայ աշխատավոր ժողովուրդը, դավա-

ճանված ու վաճառված՝ իր «բարեկամներ»ից, «ազգային տխրահռչակ փբրկիչներ»ից, հասել էր կործանման անդունդի եզրին. այդ տագնապալի և ծանր օրերին հնչեց Ի. Վ. Ստալինի բարեկամական և փրկարար ձայնը. «ԻՆՉ ԳՆՈՎ ԷԼ ԼԻՆԻ՝ ՊԵ՛ՏՔ Է ՓՐԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ»:

Ու ո՛չ միայն փրկվեց հայ ժողովուրդը մեծագույն աղետից՝ ֆիզիկական բնաջնջումից, այլև ձեռք բերեց իր ազատ գոյության իրավունքը, պետականությունը՝ դառնալով Սովետական Միության մեծ ընտանիքի իրավահավասար անդամը: Ի. Վ. Ստալինի դառնակսկիծ մահով, գրում է Վեհափառը իր ցավակցական հեռագրում, «Հայ ժողովուրդը կորցրեց իր ճշմարիտ բարեկամին ու պաշտպանին, որի շնորհիվ հայ ժողովուրդը ավերակներից հարություն առավ, իր պատմական իղձին հասավ՝ պետական ազգ դարձավ և իր կուլտուրական ու տնտեսական զարգացմամբ և արդյունաբերությամբ այսօր իր բարգավաճման ու վերելքի բուռն շրջանն է ապրում 16 հավասար դաշնակից սովետական պետությունների շարքում»:

Արդարև, «ՄԻԱՅՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԲԵՐԵՑ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» (ՍՏԱԼԻՆ):

Սովետական կենսաբեր արևի տակ աճեց, բարգավաճեց երբեմնի խեղճ, երբեմնի հալածական բազմաչարչար հայ ժողովուրդը: Դաղթականների և որբերի նախկին քարոմանդ երկիրը, իր գոյության 30 տարում, դարձավ Սովետական Միության ծաղկուն ռեսպուբլիկաներից մեկը: Հայ ժողովրդի պատմության վերջին երեսնամյակում ձեռք բերված բոլոր հաջողությունները՝ արվեստի, գրականության, արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և այլ ասպարեզներում, սերտորեն կապված են մեծ Ստալինի անվան և նրա հայրական ամենօրյա հոգատարության հետ:

Ի. Վ. Ստալինին երախտապարտ է նաև մեր Սփյուռքի հայությունը: Դեռևս 1945 թվականին, երբ նոր էր երկիրը դուրս եկել Համաշխարհային երկրորդ պատերազմից, երբ պատերազմի թողած վերքերը դեռ չէին ապաքինված, ստորագրվեց պատմական նշանակալից այն հրամանը, որով թույլ էր տրվում Սփյուռքի հայերին տեղափոխել իրենց Հայրենիքը՝ վերջ դնելով իրենց թափառական վիճակին:

Ի. Վ. Ստալինը բարյացակամ վերաբերմունք է ունեցել նաև Հայաստանյայց Եկեղեցու նկատմամբ: Այն փաստը, որ նա ընդունեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին, ուշադիր ունկնդրեց Հայոց Եկեղեցու Հայրապետի (այն ժամանակ դեռևս Արքեպիսկոպոս, Կաթողիկոսական Տեղակալ) առաջադրած հարցերին և արեց որոշ ընդառաջումներ, պերճախոս վկայում է նրա լայնախոհությունը, Հայրենիքի հանդեպ շիտակ դիրք ունեցող կազմակերպության նկատմամբ հովանավորություն ցույց տալու բարյացակամ վերաբերմունքը:

Այս վշտալի օրերին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հայ երախտագետ ժողովրդի հետ միասին, ամենախոր հարգանքով խոնարհվում է իր մեծ բարեկամի, ազատարարի սուրբ հիշատակի առաջ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հայ հավատացյալ ժողովրդի հետ, իր Դերագույն Պետի՝ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի գլխավորությամբ, այսօր, խորը վշտով բաժանում է սովետական ժողովուրդների և ամբողջ աշխարհի աշխատավորության ամենածանր վիշտը, կորուստը, հանձին Ի. Վ. Ստալինի մահվան:

Մեծ է Սովետական Միության և ողջ աշխարհի աշխատավորության վիշտը, անդարմանելի՝ կորուստը: Բայց վիշտը մարդկանց զգոնացնում է, համախմբում, ամրապնդում. վշտի ու տառապանքի մեջ մարդիկ նոր ուժ և քաջություն են գտնում՝ անավարտ մնացած գործը շարունակելու համար: Սովետական ժողովուրդը իր մեծ վիշտը այս օրերին վերածում է մեծ ուժի:

Մահացածների վրա անհուսորեն լացը դատապարտում է և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին: Ի. Վ. Ստալինը ֆիզիկապես է բաժանվել իր ժողովրդից, բայց ոգով նրա հետ է, աշխարհի հետ է: Երեկ նա իր ժողովրդի հետ էր, նրա աշխատանքի խաղաղ ոստեներում, նրա մարտերում, նրա հավաքույթներում, նրա հանգստի ժամերին: Այսօր նա ժողովրդի սրտերումն է. նա ժողովրդի հետ է ամեն տեղ՝ ուր եռում է սովետական քաղաքացու ստեղծագործ աշխատանքը, ուր պայքար է գնում հանուն խաղաղության ողջ աշխարհում:

Ստալինը չի մեռել. կարելի՞ է միթե արևը թաղել, արդարությունը, իրավունքը, ճշմարտությունը, խիղճը գերեզմանել: Նա մարդկության խիղճն էր, պատիվը, նա անմահ է ինչպես ժողովուրդը:

Հարյուր միլիոնավոր մարդկանց սրտերում, այդ թվում և հայ ժողովրդի երախտագետ սրտում, միշտ պայծառ ու վառ կմնա խաղաղության մեծ դրոշակակիր, ճնշված և իրավազուրկ ժողովուրդների բարեկամ և ազատարար անմահ Ի. Վ. Ստալինի պայծառ կերպարը:

Հավերժ փա՜ռք և բյո՜ւր օրհնություն նրա անմահ հիշատակին: